

ԽՈՍՈՒՅԹԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԱՆԴՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

«Խոսույթ» հասկացությունն առանցքային է համարվում ոչ միայն ժամանակակից լեզվաբանական, այլև հոգեբանական, հոգելեզվաբանական, հանրալեզվաբանության, փիլիսոփայական և այլ տեսություններում: Խոսույթի սահմանման և վերլուծության ժամանակագրությունը բավականին հարուստ է և դրանում իր ուրույն տեղն ու դերն ունի այսպես—կոչված «խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցը»:

Ինչպես հայտնի է լեզվաբանության պատմությունից, «խոսույթ» հասկացությունը ծագել է լատիներեն «discursus» բառից, որը նշանակում է դատողություն կամ կշռադատություն¹: Ըստ է. Բենվենիստի խոսույթը «ասույթ է, որն արտահայտում է խոսողի նպատակը՝ որոշակիորեն ներգործել նրա վրա»:² «Խոսույթ» տերմինն օգտագործվել է լեզվաբանության մեջ նախ իբրև գործառական ոճի տեսակ: Այն կիրառվում էր իբրև «տեքստ» տերմինի հոմանիշ: Նախնական շրջանում այդ եզրույթները հիմնականում նույնացվում էին: Սակայն, աստիճանաբար, 20-րդ դարի 80-ական թվականներին նկատվում է այդ երկու հասկացությունը տարանջատելու միտում:

Ինչպես հայտնի է, Ֆերդինանդ դը Սոսյուրը³, իր տեսության անկյունաքար է դարձնում «լեզու» և «խոսք» հասկացությունների հակադրումը: Ընդ որում՝ «խոսույթ» հասկացությունը նրա լեզվաբանական հայեցակարգում ուղղակիորեն չի քննարկվում:

Շառլ Բալլին⁴ առաջադրում է խոսքի լեզվաբանության սկզբունքները, որոնք հիմք են դնում խոսքի, խոսույթի և ենթատեքստի աստիճանական տարանջատման: Սակայն, եմիլ Բենվենիստը⁵ առաջինն է ֆրանսիական լեզվաբանական դպրոցի ներկայացուցիչներից, ով փորձում է հիմնավորել խոսույթի վերլուծության սկզբունքները: Խոսույթը, ըստ Բենվենիստի, խոսելու ընթացքում արտահայտության դրսևորումն է /la manifestation de l'énonciation/:

¹ Философский словарь /Под ред. И. Т. Фролова. – 5-е изд. – М.: Политиздат, 1986. – 590с. – С.128.

² Назарян. А.Г Французско-русско-армянский учебный словарь лингвистических терминов. Ереван, Изд-во “Аполлон”, 1993. – 487с.

³ Ferdinand de Saussure, “Cours de linguistique générale”, publié par Ch. Bally, A. Sechehaye, A. Riedlinger, coll. “Études et documents”, Payot, Paris, 1969, 332p.

⁴ Ch. Bally, “Traité de stylistique française”, vol. I et II, Genève: Librairie Georg et Cie Paris: C.Klincksieck, 1951, 331 et 264p.

⁵ Emile Benveniste, “Problèmes de la linguistique générale”, vol. I et II, coll. “NRF:Bibliothèque des sciences humaines”, Gallimard, Paris, 1975 et 1978(1966 et 1974), 356 et 288p.

Անհրաժեշտ է ընդգծել, որ արտահայտության լեզվաբանության ծնունդը նոր շունչ հաղորդեց խոսույթի ըմբռնման նոր մեթոդներ ընտրելու համար: Խոսույթի վերլուծությունն այլևս չէր սահմանափակվում տեքստում տրված նյութի հետազոտությամբ: Առաջին պլան է մղվում խոսույթի շարադրման եղանակների բացահայտման հիմնախնդիրը:

Կարևոր է նշել, որ խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցի գիտական գաղափարախոսության հիմքում մախ և առաջ ընկած է նեոպոզիտիվիզմի փիլիսոփայությունը, որի առանձնահատկություններից մեկն այն է, որ ակնհայտորեն հակադրում է «տեքստ» և «խոսույթ» հասկացությունները: Այդ առումով կարևորվում է Ս. Պելշյոյի մոտեցումը, քանի որ նա քննության է ենթարկում խոսույթը ձևավորող պայմանների կառուցվածքային տարրերը՝ ընդգծելով իրադրությունների և դիրքորոշումների դերը: Նա փորձում է բացահայտել «իրադրություններն արտացոլող դիրքորոշումների (les positions - représentations de ces situations) միջև առկա հարաբերությունները»⁶:

Խոսույթաստեղծ հասարակական դիրքորոշումների համապատկերում տեքստը հետին պլան է մղվում: Ասվածը հաստատում է Լ.Գեսպենի այն դատողությունը, թե «Տեքստ հասկացությունն անորոշ է՝ անգործության մատնված: Այն միտում ունի փոխարինվելու ասույթ /l'énoncé/ և խոսույթ հասկացություններով»⁷:

Պ. Շարոդոն ելակետային համարելով այն տեսակետը, ըստ որի տեքստն ընդամենն ասույթի մի տեսակ է, հակադրում է «ասույթ» և «խոսույթ» հասկացությունները հետևյալ կերպ.

«Ասույթ + հաղորդակցության իրադրություն = խոսույթ
(ÉNONCÉ + situation de communication = DISCOURS)⁸:

Շարոդոն վերաձևակերպում է նաև «տեքստ» և «խոսույթ» հասկացությունների սահմանազատումը: Նրա համոզմամբ՝ տեքստն ուրիշի լեզուն ներկայացնող միջոց է: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր տեքստ կարող է ուղեկցվել բազմաթիվ խոսույթներով, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է տարբեր ժանրեր ու իրադրություններ: Օրինակ՝ քաղաքական ժանրում կարող են տեղ գտնել դիդակտիկական կամ կարգային բնույթի խոսույթները:

Տեքստը փաստորեն ասույթ է, որ կարող է առկայանալ /s'actualiser/ խոսույթում: Այլ կերպ ասած, տեքստը կարող է համարվել լեզվական նյութ.

⁶ Michel Pécheux, "Analyse automatique du discours"; coll. "Sciences du comportement", Paris: Dunod, 1969, p.118.-142p.

⁷ Louis Guespin, "Pratiques linguistiques, pratiques sociales", Presses universitaires de France, 1980, p.13.-210p.

⁸ Patrick Charaudeau, "Conditions linguistiques d'une analyse du discours", U. de Lille III, 1973, p.28.-573p.

կազմավորում, բայց ոչ գործընթաց»⁹:

Ժ. Է. Սարֆաթին գրում է. «խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցի ներկայացուցիչների հետ համամիտ ենք նրանում, որ խոսույթը լեզվաբանական կերտվածք /une production linguistique/ է՝ իր ստեղծման սոցիալ-գաղափարական պայմաններով կազմելով մեկ ամբողջություն, որը ենթակա է ուսումնասիրության:

Խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցի հետազոտություններում խոսույթը սերտորեն առնչվում է արտահայտությանը /l'ènonciation/, իսկ տեքստը՝ ասույթին /l'ènoncé/: Փաստորեն տեքստը կարելի է սահմանել որպես ենթատեքստից զուրկ խոսույթ: Այսպիսով, պահանջվում է տեքստի փոխարեն հետազոտության առաջին միավոր դարձնել խոսույթը: Դրա արդյունքում հետազոտության առաջին պլան են մղվում խոսույթաստեղծման պայմանները: Տեքստի և խոսույթի հակադրությամբ խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցը, ապա Գրեյմասյան մշանագիտությունը առաջ են քաշում այն ավանդական մոտեցումը, ըստ որի՝ նախալեզվական գործոնը պայմանավորում է կանխորոշում է լեզվական իրողությունը: Դրա հետ մեկտեղ, անուշադրության է մատնվում այն փաստը, որ այդ նույն նախալեզվական գործոնը կարող է լինել խոսույթաստեղծման հասարակական պայմանների արդյունք կամ մշանային համակարգը ներկայացնող որոշակի կաղապար:

Ինչպես հայտնի է ընդհանուր լեզվաբանությունից, տեքստը նեղ իմաստով կարող է նկարագրվել որպես գրավոր կամ բանավոր արտահայտության ձև՝ կազմված անգամ մեկ նախադասությունից կամ ընդամենը մեկ բառից, որն արտահայտում է ավարտուն միտք և հեղինակի մտադրությունը: Մինչդեռ, երբ այն սահմանում են լայն իմաստով, ապա այն կարող է ընկալվել որպես ցանկացած ծավալի լեզվական արտահայտություն: Այն կարող է լինել բազմահատորանոց վեպ, հոդված կամ մի ամբողջական շարաքաթերթ, ինչպես նաև մեկ մամակ կամ անգամ մամակագրություն և այլն: Այսպիսով, տեքստերն այնքան բարդ ու բազմազան են իրենց կառուցվածքով, որ անհնարին է ստեղծել դրանց տիպաբանությունն առանց նվազագույն կառուցվածքային միավորների /նախադասությունների/ առանձնացման:

Գործաբանական լեզվաբանության տեսանկյունից տեքստը ներկայանում է իբրև մշակութային մշանային համակարգի կարևորագույն տարր: Այդ հարթության վրա նույնպես «տեքստ» և «խոսույթ» հասկացությունները հակադրվում են՝ հանգեցնելով նրանց նոր առանձնահատկությունների բացահայտման:

⁹ A. Julien Greimas, Joseph Courtès, "Sémiotique: Dictionnaire raisonné de la théorie du langage", Paris: Hachette, 1979, p. 389.-454p.

Տեքստային քերականության տեսաբան Միշել Արիվեն փորձում է ընդլայնել տեքստային քերականության սահմանները՝ առաջադրելով «խոսութային կապակցելիություն» /la cohérence discursive/ կամ «տեքստային կապակցելիություն» /la cohérence textuelle/ հասկացությունները: Փաստորեն տեքստային քերականությունը նշված հեղինակի հայեցակարգի շրջանակներում ուսումնասիրում է ասույթների կապակցելիությունը՝ խոսույթը դիտարկելով որպես ամբողջական միավոր /une unité totalisante/:

Խոսույթի վերլուծությունն ավելի արդյունավետ է դառնում հաղորդակցական վարքագծերի ուսումնասիրության համատեքստում: Գիտնականները սկսում են բացահայտել մշակութային վարքագծի և սոցիալական խոսույթների փոխկապակցվածությունը: Պատահական չէ, որ գործաբանական լեզվաբանության շրջանակներում խոսույթը դիտարկվում է որպես ասույթների ամբողջություն, որոնք բնորոշվում են ներգործելու և փոխներգործելու հատկությամբ: Առանցքային են դառնում «խոսող», «խոսակից», «հաղորդակցման պահ» և «հաղորդակցման վայր» հասկացությունները:

Հանրալեզվաբանության /la sociolinguistique/ նշանավոր ներկայացուցիչ Ջ.Գյունպերցը¹⁰ խոսույթի սոցիալ-լեզվաբանական նկարագրության մեջ շեշտադրում է մակերեսային նշանների ընկալման և մեկնության /l'interprétation/ միջև առկա, մինչ այդ ուսումնասիրությունից դուրս մնացած կապերի բացահայտումը: Ըստ Գյունպերցի խոսութաստեղծ գործունեության հիմքում ընկած է մտքերի բանավոր փոխանակումը, որոնք ունեն ենթատեքստային բնույթ /la contextualisation/ կամ ձևավորվում են մի շարք խոսութային գործողությունների արդյունքում միավորված հերթագայություններով: Ըստ նրա խոսութաստեղծ ենթատեքստն արտահայտվում է նրանով, որ խոսողը և ունկնդրողը տվյալ պահին և տվյալ վայրում կիրառում են իրենց աշխարհըմբռնումն ու աշխարհայացքն արտահայտող բանավոր և գրավոր նշաններ: Ենթատեքստի մակարդակների տարազատումը նպաստում է խոսութային գործընթացի ճիշտ ներկայացմանը և նրա առանձնահատկությունների բացահայտմանը:

Խոսույթն ուսումնասիրելիս որոշ հեղինակներ¹¹ գտնում են, որ խոսութային գործառնությունները /les opérations discursives/ գիտելիքը բանավոր ներկայացնելու և դատողություններ անելու տեսանկյունից պարզեցված ընդհանրացումներ են /des schématisations/: Պարզեցված ընդհանրացումը նմանեցնում են բաց համակարգով գործող, բարդ, բազմաստիճան կենդանի օրգանիզմի:

¹⁰ J. Gumperz, "Sociolinguistique interactionnelle: une approche interprétative", Harmattan, Paris, 1989.

¹¹ Michel Charolles/Sophie Fisher/Jacques Jayez, "LE DISCOURS, Représentations et interprétations", Presses Universitaires de Nancy, 1990.

խոսույթի բաց համակարգ լինելը ենթադրում է, որ այն չի կարող լինել ավարտուն, և տեսականորեն ոչինչ չի կարող խոչընդոտել նրա զարգացմանը: Սա խոսույթի այն յուրահատկություններից մեկն է, որով այն հակադրվում է կամ տարբերվում է, օրինակ, մաթեմատիկական գործողությունից: Խոսույթի բաց համակարգ լինելը վկայում է այն մասին, որ խոսութային գործառնությունների արդյունքում առաջացած պարզեցված ընդհանրացումները մեկուսացված չեն, այլ համդեմ են գալիս որոշակի միջավայրում, այլ կերպ ասած խոսութաստեղծ պայմաններում: Դա հաշվի առնելով՝ լեզվաբանները առանձնացնում են խոսույթի երեք կարևոր բովանդակային բնութագիր.

1. Չկա ունկնդիր /le locuteur/ առանց խոսակցի /le locutè/: Խոսույթը միշտ ուղղված է ինչ-որ մեկին՝ նրա վրա որոշակի -ազդեցություն գործելու նպատակով: Սրանից հետևում է, որ խոսութային պարզեցված ընդհանրացումը հարմարեցվում է այն անձին կամ անձանց, որին կամ որոնց այն ուղղվում է՝ որոշակի ներգործության նպատակով: Փաստորեն խոսույթում առկա է նաև փաստարկային բաղկացուցիչը:
2. Խոսութային գործառնությունները ներկայացնելով իբրև պարզեցված ընդհանրացումներ՝ դրանց վերագրվում է երկակի բնույթ: Մի կողմից՝ դրանք սոցիալական արտահայտություններ են, ստիպված են բավարարել տվյալ մշակույթի շրջանակներում ձևավորված պահանջները: Սյուս կողմից՝ խոսութային գործառնությունները ենթարկվում են ողջամտության և բանականության կողմից թելադրվող բազում սահմանափակումների, օրինակ՝ կախվողի տամը պարանից չեն խոսում:
3. Խոսույթը պետք է լինի անհրաժեշտ չափով կայուն՝ հնարավորին կերպ հաստատուն կառուցվածք ունենալու համար և միևնույն ժամանակ բավարար չափով ճկուն՝ մեկ այլ անձի կողմից /հեղինակից բացի/ վերարտադրվելու համար:

Լեզվաբանական, սոցիալ-լեզվաբանական, գործաբանական, մեթոդաբանական, մշանագիտական հետազոտություններն ամփոփելով կարելի է ասել, որ խոսութային իրազեկությունը ներառում է միաժամանակ հաղորդակցական և տեքստային իրազեկություններ /des compétences communicatives et textuelles/: Վերջինիս դերն այն է, որ ընթերցողները ներընթերցողաբար կարողանում են տարբերակել պատմողական, փաստարկային կամ նկարագրական տեքստերը: Ակնհայտ է, որ ընթերցողը միևնույն ձևով չի կարողում նկարագրությունը, երկխոսությունը կամ պոեմը: Տեքստերի կամ տեքստային հերթագայությունների /des séquences textuelles/ այս տարբեր տեսակները պահանջում են համապատասխան ռազմավարությունների և իրազեկությունների /des stratégies et des compétences/ կիրառում:

Եզրակացություն.

խոսքի, խոսույթի և ենթատեքստի աստիճանական տարանջատման հիմքում ընկած է խոսքի և լեզվի, տեքստի և խոսույթի հակադրումը և զուգադրումը:

Խոսույթի վերլուծության ֆրանսիական դպրոցի գիտական գաղափարախոսության հիմքում նախ և առաջ ընկած է նեոպոզիտիվիզմի փիլիսոփայությունը:

Խոսույթը ձևավորող պայմանների կառուցվածքային տարրեր հանդիսացող իրադրությունների և դիրքորոշումների ուսումնասիրությունը հետին պլան մղեց տեքստը:

Առանցքային է այն դրույթը, ըստ որի՝ տեքստը կարող է համարվել լեզվական նյութ, կազմավորում, բայց ոչ գործընթաց: Տեքստի և խոսույթի հակադրությամբ առաջադրվում է այն ավանդական մոտեցումը, ըստ որի՝ նախալեզվական գործոնը պայմանավորում և կանխորոշում է լեզվական իրողությունը:

Գործաբանական լեզվաբանության տեսանկյունից տեքստը ներկայանում է իբրև մշակութային մշանային համակարգի կարևորագույն տարր: Այդ հարթության վրա նույնպես «տեքստ» և «խոսույթ» հասկացությունները հակադրվում են՝ հանգեցնելով նրանց նոր առանձնահատկությունների բացահայտման:

Տեքստային քերականության շրջանակներում ուսումնասիրվում է ասույթների կապակցելիությունը, որտեղ խոսույթը դիտարկվում է որպես ամբողջական միավոր:

Խոսույթի վերլուծությունն ավելի արդյունավետ է դառնում հաղորդակցական վարքագծերի ուսումնասիրության համատեքստում:

«Խոսույթ» հասկացությունը տարբեր ձևերով է սահմանվում, քանի որ քննության է առնվում տարբեր մեթոդաբանական մոտեցումների տեսանկյունից: Համապատասխան վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդլայնելով խոսույթի սահմանման միտումները՝ ֆրանսիացի լեզվաբաններն աստիճանաբար սկսում են դիտարկել խոսույթը գործաբանական լեզվաբանության շրջանակներում: Տեղի է ունենում տեքստի քերականության և վերլուծության օբյեկտի շարունակական ընդլայնում: Դրա արդյունքում, առաջին պլան են մղվում խոսույթի վերլուծության հանրալեզվաբանական տարրերը: Հետագոտության դաշտի ընդլայնման պայմաններում, բանավոր կամ գրավոր ցանկացած ստեղծագործություն կարող է դառնալ խոսույթի վերլուծության առարկա: Ակնհայտորեն կաղապարի ընդարձակ ու բազմազան բնույթն էլ հենց պայմանավորում է մեծ թվով տեսական մոտեցումների առաջացումը: